Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունիսի 1-ի N 896 - Ն որոշման

ԶԵՆՔ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական և ծառայողական, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործման համար ստացված, ինչպես նաև որպես պարգև տրված մարտական զենքը կրելու պայմաններին վերաբերող պահանջները:

2. Ոստիկանության մարմինների կողմից տրված զենքը պահելու և կրելու թույլտվությունների հիման վրա զենք կրելը թույլատրվում է՝

1) հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց, պետական մարմինների պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2) հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողներին՝ ծառայողական պարտականությունների կատարման զենք կրելու թույլտվություն.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ ինքնապաշտպանության, սիրողական, մարզական և ուսուցողական հրաձգության, որսորդության, սպորտային և մշակութային միջոցառումների, ռազմամարզության ընթացքում, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում օգտագործելու համար:

3. Երկարափող հրազենը կրում են ծածկաշապիկով, դրված պահպանակի, իսկ կարճափող հրազենը՝ պատյանում, նույն կերպ:

4. Զենքի կրկնօրինակներ, ինչպես նաև մշակութային արժեք ունեցող զենք թույլատրվում է կրել միայն ազգային տարազի հետ՝ առանց փամփուշտի՝ պետական մարմինների, թանգարանների, պետական կամ հասարակական

կազմակերպությունների կողմից իրականացվող պատմամշակութային միջոցառումներին քաղաքացիների մասնակցության դեպքում՝ նշված միջոցառումների իրականացումը Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ:

5. Սույն կարգի 2-րդ կետում նշված անձինք զենք կրելիս պարտավոր են իրենց մոտ ունենալ անձը հաստատող փաստաթուղթ և զենք պահելու և կրելու թույլտվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

05.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ